

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ՏԵՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

49րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 5

29 ՅՈՒՆՈՒԱՐ 1900

Մասիս շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիրն է կես օսմ. ոսկի թի' 4. Պոլսոյ եւ թի' չաւառներուն համար, կանխիկ : Արտասահման' 12 ֆրանկ : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր :

Մասիս հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առօր, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխաւանդակներուն ու Պահչե-Գաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաքիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն փոյ :

Ձեռն. կրթութիւնի ՀԱՏԸ 40 ՓԱՐՍԵԻ

Հ Ա Ս Ց Է

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Ղալաքիս, Նորաստուկեան Խան, Թիւ 13

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

“ՄԱՍԻՍ”Ի ԱՅՍ ԷԶԸ

ՏՐԱՄԱԴՐԵԼԻ Է

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՆՈՒՑՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ


ՄԱՍԻՆ

49^{րդ} ՏԱՐԻ

— 29 ՅՈՒՆՈՒԱՐ 1900 —

ԹԻՒ 5

ԲՐՅՈՒԱԾ ԷԶԸ



ՈՒՂԹԻ կտորը , որուն մէջ կը փաթթուի հայ խմբագիրներուն միջօրէի սովորական ճաշը — ի՞նչ հարկ աւելի ման-

րամասնել — տպագիր էջ մըն էր այս անգամ , ֆրանսերէն հատորէ մը ըլլալով . ու մեքենայարար աչքերս վրան կը յառնէ : La dame aux caméliasին 33-34րդ թերթը , Միշլէ Լէվիի հին տպագրութիւն մը , որ ո՛վ գիտէ ո՛ր զբոսաշարանին խորշէն եկեր ինկեր էր մինչեւ . . . նպարտաւճառին խանութը :

Ու ընդհատելով յօլուածը — « խմբագրական » մը , եթէ կը սիրէք աւանդական բաները , — զոր սկսեր էի գրել Մասինսի այս թիւին համար՝ անոր տեղ գրի կ'առնեմ վայրկեանական տպաւորութիւնս այդ մոլորած էջին ընթերցումէն , մոլորած ու զղջահար կնոջ այն պատմութիւնը որ երէկուան պէս կենդանի է նոյն իսկ անոնց մաքին մէջ որոնք կարդացած ըլլան զայն տասը կամ աւելի տարիներ առաջ : Մարկսիթ Կոթիէի վերջին նամակներէն մէկն էր , անկողինին վրայ գործուած , ամէնէն յուզիչը ու ամէնէն անկեղծը , զոր Արման Տիւլլա ձեռք անցուց երբ Գամէլիազարդ Տիկնոջ աղուոր հասակը հողին տակը պառկած էր արդէն :

« Սիրելիս Արման , ստացայ նամակդ . միշտ բարեսիրտ մնացած ես , եւ ասոր համար փառք կու տամ Աստուծոյ : Այո՛ , բարեկամս , հիւանդ եմ , եւ կը տառապիմ հիւանդութեամբ մը որ խնայել չի գիտեր . բայց հողածութիւնը զոր տակաւին կը յօժարիս ցուցնել իմ մասին՝ մեծապէս կը նուագեցնէ քաշած ցաւերս : Բաւական երկար չպիտի ապրիմ , սեղմել կարենալու համար այն ձեռքը որ գրեց ընդունած քարի նամակս որուն խօսքերը պիտի բժշկէին զիս , եթէ երբէք բան մը կարենար բժշկել զիս : Ա՛յ չպիտի տեսնեմ զքեզ , վասն զի շատ մօտ եմ մահուան , ու հարկաւոր մզոններ կը բաժնեն զիս քննէ : Խեղճ բարեկամ , քու երբեմնի Մարկոիդդ բոլորովին փոխուած է հիմակ , եւ գուցէ լաւագոյն է որ անգամ մըն ալ չտեսնես զայն՝ քան թէ տեսնես իր այս վիճակին մէջ : Կը հարցնես ինծի թէ կը ներեմ քեզի . ո՛հ , բոլոր սրտովս , բարեկամ , վասնզի այն ցաւը զոր ինծի պատճառել ուղեցիր՝ ուրիշ բան չէր բայց եթէ իմ վրաս ունեցած սիրոյդ մէկ ապացոյցը : Ամիս մըն է անկողինն եմ , եւ այնչա՛փ կարեւորութիւն կ'ընծայեմ քու համարուած վայելելու որ կեանքիս օրագրութիւնը կը գրեմ ամէն օր , մեր բաժանման վայրկեանէն սկսելով մինչեւ այն վայրկեանը ուր ա՛լ գրելու ուժ չի մնայ վրաս . . . »

Յաջորդ ամիսները , իւրոտած ու պատահուն , անընթեռնի են գրեթէ . ու չեմ փորձեր Տիւմա Որդիի վէպին մաքուր մէկ հատո-

րը գտնել , ամբողջացնելու համար զայն ,
Թուզթին , ասուած թուզթին աստանդական
ճակատագիրը կը պատկերացնէ իմ աչքիս այս
բրցուած էջը , տեսակ մը « ասորիմ-մեռնիմ »
ինքն ալ , պարունակելով իր մէջ Մարկոսի
անունը , խոնարհ ու անշուք դարձած այն-
տեղ՝ մարկոսի ծաղիկին պէս զոր այնքան
զգայուն տողերով պատկերացուց Ձօհրապ այս
էջերուն մէջ :

Յրանսացի վիպասանին հրաշակերտը , —
զոր զրականութիւն ու թափոն հաւասարու-
պէս ընդգրկած են , մինչև այսօր շարունա-
կելով ապագրել ու ներկայացնել , — երբ
այսպէս թերթատուած , քրքրուած , ծրարի
տեղ ծանայող թուզթէ մըն ալ , նուազ յարգ-
կ'ունենայ , զիպուածը ինչե՞ր կը վերապահէ
տրդեօք այն բոլոր գրուածներուն զորս վիպա-
սանը , բանաստեղծը , հրապարակագիրը կը
յանձնեն մամուլին . ո՞վ կրնայ երաշխաւորել
թէ սրտէ բղիւսած ու աչքի լոյս թափուելով
հրապարակ ելած մտքի այնքան զեղեցիկ ար-
տագրութիւններ օրին մէկը չպիտի երթան
ստուարացնել անկիւնի բերեղակին կապոյնե-
րը , եթէ տղաքը իրենց թոռցիկին ծայրը
չզարդարեն անով :

Դիպուածի այդ քմահաճոյքին քով , — որ
միեւնոյն զրքին մէկ օրինակը կաշեպատ շը-
քեղ կազմուածքով մը մատենադարանի մը
խորշին մէջ կը տեղաւորէ՝ մինչ ուրիշ մէկ
օրինակը պոլիթիքսիին կը զրկէ ու անկէ ալ
փողոց — աւելի արուր չէ՞ք գտնել վիճակը
այն մարդուն , ընթերցասէրին ու գրասէրին ,
որ իր սիրական մէկ հատորը , որուն հեա-
պարած է ամբողջ երիտասարդութիւնը , լը-
րագրի մը մէջ ծրարած , յուշիկ քայլերով ,
գրելի է ամօթահար , կը տանի վաճառել հացի

ստակ մը ճարելու համար : Քանինե՛ր այս
հարկին մէջ գտնուած , սրտի շատ աւելի գտն
սեղմում ունեցեր են քան աշխարհիկ կինը որ
իր ազամանքները կը յանձնէ գոհարավաճառին՝
խախտած հարստութեան մը երեւոյթը պահ-
պանելու մաքառումով :

Երցուած էջին հանդիպումը հազուադէպ
չէ առօրեայ կեանքի մէջ . ամբողջ շարք մը
կը կազմէ անիկա պէսպիսութեանց . օր մը
ալճէպրայի հայիւներով լեցուն թերթ մըն է ,
ուրիշ օր մը քերականական հասուած մը ,
երբեմն ոտանաւոր կը պատահի եւ երբեմն ալ՝
երբ թուզթը զոյգ է՝ զիպուածը բանաստեղ-
ծութեան մը քով զետեղած կ'ըլլայ հաշուե-
ցուցակ մը : Ոտանաւորը թերեւս արցունք
մը կը պահէ . իր մէջ եւ հաշուեցուցակը՝
գրամական անձկութեան մը դազանիք :

Յետոյ , ձեռագրին ճակատագիրը կայ ,
մերժուած , չհրատարակուած կամ կորսուած
ձեռագրին ճակատագիրը որ ամէնէն խորազ-
ղեցիկն է , զգորոցականներու գոտատարերը ,
որոնք արցակով չաքարավաճառին կ'երթան ,
զեղազիր ընդօրինակուած շարագրութիւններ ,
բանաստեղծութիւններ որոնց մէջ խաղալիք
կը փաթթուի . մանկամարդ աղջկան մը սիրա-
տոմար կամ երիտասարդի մը զգայուն մէկ
գրուածքը , . թարգմանուած վէպի մը մասը ,
ուսումնասիրութեան մը քանի մը թերթերը ,
զորս բաղդին հովը կը տարաբոլէ հոս՝ հոն :

Ու այս բոլորը , ապագիր կամ ձեռագիր ,
մէյ մէկ էջ են ո՛չ միայն իրենց հատորէն կա՛մ
տետրակէն լատիւսաբ , ալ մանաւանդ գրողին
սրտէն բրցուած , ցաւի կամ խնդութեան ար-
ձագանդ մը որ աշխատութեան խուցի մը չորս
պատերուն մէջէն կ'արձակուի՝ փողոցին մէջ
մարելու համար :

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ



Մ Ե Ղ Ե Ռ Ի



ՂՈՒՈՐ աչքեր, սիրեցեք մեզ, սիրող աչքեր.
Լըճակին քով, բուփերն իրենց շուքը լրտին՝
Թարթիչներու պէս՝ կը քրտեն կապոյտ ջուրին.
Աղուոր աչքեր, սիրեցեք մեզ, սիրող աչքեր:

Ո՛վ համբոյրներ, երգեցեք միշտ, երկինքն ի վեր.
Լճակին ջուրը կը համբուրէ կողը ժայռին,
Եւ սարսուռի շրջող շիբեր վար կը ծորին.
Ո՛վ համբոյրներ, երգեցեք միշտ, երկինքն ի վեր:

Այգը դեռ, կոյս, կը փախչին մութ տարփանքներէն.
Այգը, դեռ, կոյս, դեռ չի սիրած արեւն իրեն,
Աղուոր աչքեր, սիրեցեք մեզ, սիրող աչքեր:

Ծաղիկներու բոյրերն յուշիկ կը մօտորին.
Հեշտ երազէ մը կը դողայ շուրթը մերին.
Ո՛վ համբոյրներ, երգեցեք միշտ, երկինքն ի վեր:

1894

* *

Լ Ե Լ Ա Կ Ն Ե Ր Ը



ՈՒՏԼԻԱՆ մեղմ սիւքին տակ,
Մեղմ՝ համբոյրին պէս կոյսի,
Կը դողդրղան մեկուսի
Լուրք լելակներն ու ճերմակ:

Մեղմ՝ համբոյրին պէս կոյսի,
Առի անոնց բոյրն յըստակ.
Լուրք լելակներն ու ճերմակ
Տարփոտ լանջեր են՝ ըսի:

Առի անոնց բոյրն յըստակ,
Ինչպէս հեւք մը նոր հարսի.
Տարփոտ լանջեր են՝ ըսի,
Ցուքերն այգուն, լոյծ լելակ:

Ինչպէս հեւք մը նոր հարսի՝
Լելակն հեշտանք մըն է տաք.
Ցուքերն այգուն, լոյծ լելակ,
Պրզտիկ ծովեր են վարսի:

1894

ՎԱՀԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ

ԻՄ ԱՌԱՋԻՆ ՈՏԱՆԱԻՈՐՄ

Երկրորդ պատասխանը, զոր կը փութանք հրատարակել, Արիստպանէն կուգայ որ Խմբագրութեան հրաւերին վրայ՝ իր սրամիտ ոնովը կը պատկէ իր առաջին հրատարակութեան ինքնատիպ պատմութիւնը ու Տպաւորութիւնը որոնց եղականութիւնը հոն է մանաւանդ որ գերեզմաններու շուրջը կը դառնան անոնք ու համակ զուարթութիւն են :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ



Մ առաջին տառաւորս հրատարակուած է . . . տապանաքարի մը վրայ, Պալըքլըի աղբ. դերեզմանատուն մէջ եւ կը սկսի սապէս .

Քանանայիս, որ ընդ շիրմաւս ի դադար,
Առ քեզ հայցե, Աստուած հրգօր և արդար
Ներեաւ մեղացն և

— Բայց ներեցէք որ նախ ես քրքրեմ պահ մը երիտասարդութեան անդարձ անո՛ւշ տաւրներուն, խանդավառ յոյսերով ու երազներով օրօրուն այն օրերուն յիշատակներն ու պատմեմ թէ ի՞նչպէս բանաստեղծ եղայ, ի՞նչ եղաւ առաջին . . . քերթուածս ու որո՞նք եղան առաջին . . . բանագողներս որոնք անշուրտ անսովոր տաղնապններու մատնեցին զիս . . .

Հասցիւղի Ներսէսեան վարժարանին երկու ամսուան աշակերտ էի, հաշիւ 8 տարեկան, երբ օր մը հէգ մայրս՝ սոսկումով՝ ճճի մը նշմարեց վրաս, աղքատիկ դասընկերոջ մը հերախօիւ գլխէն եկած ազտօտ . . . գողթական մը . . .

. . . « Ո՛հ, չէ՛, չէ՛, գոչեց իրիկունը հօրս, ալ առնը վար չեմ դնէր, ցերեկօթիկ չեմ զըրկէր աս ազան : Սրբազանին ըսենք, թո՛ղ խօսի, ու վերի գպրոցը գնենք — երթա՛յ : »

Սրբազանը՝ Ներսէս վարժապետեանն էր, այն ատենը Հասցիւղի քարոզիչ — հօրս մտերիմը — իսկ վերի դպրոցը՝ Նուպար Շահնազարեան վարժարանն էր, տարիէ մը ի վեր Չըքսալընի բարձունքը հաստատուած :

Ութ օրուան մէջ խօսուեցաւ, որոշուեցաւ, դոյք ու պիտոյք պատրաստուեցան, եւ

Յունուարի մէջ երկուշաբթի օր մը հօրս ձեռքէն բռնած մտայ Ն. Շ. վարժարանի դռնէն ներս :

* * *

Ն. Շահնազարեան վարժարանին թէեւ հինգ տարի անընդհատ աշակերտած, սակայն չըրջանաւարտ եղած էի անկէ՝ առանց հայ գրականութեան պատմութեան ու տաղաչափութեան դասեր առած ըլլալու : — Թորոս Նազարեան, Տ. Յովհ. Հիւնքարպէյէնտեան եւ Հ. Սուքիաս վարդապետ Պարոնեան եղած էին մեր դասատուները, երեքն ալ զբաղարամով հմուտ գրութիւններ — որոնք եղնիկ ու եզրիչէն (եւ որ ըստ կարգին) մեղի ծանօթացնելու փութկոտ — մոռցած էին մեզի ըսելու թէ հայերէն աշխարհարար լեզու մըն ալ կար օրով սիրուն բաներ գրել ու կարդալ կարելի էր :

Ես Պէշիկթաշլեանը կարդացած ու սիրած էի միայն, այն ալ իր թատերգութեանց պատճառաւ մուտ գտած էր մեր վարժարանին մէջ, ուր Բարեկենդանին ներկայացումներ կու տայինք եւ թատերախաղի պէտք կար :

Հոգիւ պատանի, կանուխէն առեւտրով զբաղած, մաքէս, երեւակայութենէս անգամ չէր անցներ թէ յանդերձ անսպառ հանքեր պահուած կային գանկիս տակ . . . որոնք զիս բանաստեղծ պիտի ընէին օր մը . . . Ընտանի տանս ու մեր աղքականաց մէջ դեռ մահ եւ սուգ չէի տեսած . սիրտս արիւնած չէր տակաւին սիրելիի մը դադաղին, մահուան սոսկումին առջեւ :

Մեծ հայրս, հէգ մօրս հայրը, քահանայ մըն էր, Գուճաբաուի Մայր եկեղեցւոյ աւագերէց . . . Տիպար մըն էր . բարի եւ անկեղծ, անուս եւ անսեթեւեթ, խղճամիտ եւ աղքատասէր, զուարթ ու խնդումերեւ, ծուխերէն

սիրուած , փնտռուած քահանայ մը , պար-
թեւ հասակով , վառվռուն սեւ աչքերով ,
գիրուկ կարմրայտ համակրելի դէմքով , գո-
րովալից՝ եւ խնամոտ՝ մեղի եւ ամէնուն
համար : Ամէն անգամ որ կու գար գիշերել
մեր տունը , քաղցր ու խտացած խունկի հոտ
մը կը բերէր հետը , եւ իր լայնածալ վերար-
կունն ու կակուղ գգուող ձեռքերուն ան-
խառն ուրախութեամբ կը փարէինք ամէնքս
ալ : Իր անդրանիկ թոռն էի ես : Հափազանց
տաք սիրով մը կը սիրէր զիս , եւ իր աղ ու
պղպեղ մաքրափայլ մօրուքին թեղերն անուշ
խաղտացում մը կ'ազդէին այտերուս երբ կը
գրկէր ու կուշտ ու կուռ կը համբուրէր զիս . . .
Թէ որքա՞ն շատ կը սիրէի զինքը ու կապ-
ուած էի իրեն՝ զգացի այն օրը երբ լուր բե-
րին թէ յանկարծամահ եղած էր Տէր Տէսէն . . .

. . . Երկու օր վերջը Մայր եկեղեցին՝
օծման եւ յուզարկաւորութեան արարողու-
թեան ներկայ եղանք . . . : Ա՛յնքան լացի
այն օրը , որ կիսանուագ տարին զիս բարե-
կամ տուն մը եւ ըփշկ բերել տունին :

. . . Ամիս մը վերջը , հէգ մայրս իրար
անցաւ վայելուչ տապանաքար մը դնել տալու
վրան : — Մարմարագործը , որուն յանձնա-
րարուած էր քարը , ութ օրէն հկաւ զըրա-
սնեակս . — « Էֆէնտի , քարին վրան ի՞նչ
պըտոր կըրուի . . . կ'ուզէք նէ՝ Թօրնափուն
պատուելի մը կայ՝ անոր կըրել տանք . . . »

Չեմ գիտեր թէ ուրկէ՞ , ինչպէ՞ս ունեցայ
յանկարծ մեծ հօրս տապանագիրը յօրինելու
զազափարը — ե՛ս որ երկու տող բան յանգած ,
տակէ տակ դրած չունէի բնաւ . . . :

Իրիկունը , մարմարագործին յայտնած պէտ-
քը իմացուցի նախ մօրս , եւ կարդացի հե-
տեւեալ պատուելիական արգահատելի ոտա-
նաւօրը զոր երկնած , պատրաստած էի օր-
ուան մէջ . . .

« Քանանայիս , որ ընդ շիրմաւս ի դաղար ,
« Առ քեզ հայցե , Աստուծո՛ւմ հրգօր և արդար ,
« Ներեա՛ մեղացն , և զըթուբեամբ քով անձուն
« Ընկալ ըզնա քո արդաբոց ի դատուն .
« Ջի սա բարի , աղաքիս և խոնարհ ,
« Եօթնամեայ հասակին մէջ թող գաշխարհ :

Աւելորդ է ըսել թէ գրուածքս արժանացաւ
ծնողացս միահամուռ հաւանութեան , ար-

տասուալից աչքով եւ « ապրիս » ու մը համ-
բուրեց զիս մայրս — եւ անհուն սիրովանք
ու քիչ մըն ալ անապարծութիւն զգացի՝ երբ
մարմարագործին հետ Պալլըըլ գացինք կա-
տարուած գործը տեսնելու , ու հոն բարձրա-
բերձ թմբի մը բունին կից , մեծ հօրս նորա-
տաշ ու ձիւնափառ գերեզմանաքարի , մար-
մարին վրայ խորունկ տառերով փորագրուած
— քերթըւած — կարդացի . . . առաջին քեր-
թուածս .

Քանանայիս , որ ընդ շիրմաւս ի դաղար . . .

* * *

Տարիուկէս ետքը , աշնան մէջ , մայրս ու
իր երկու քոյրերը փափաք յայտնեցին ա՛լ
անգամ մը այցելելու իրենց հօրը գերեզմանը ,
քարը տեսնելու , աղօթելու եւ օրհնել տա-
լու համար զայն :

Յրտին ու ամպամած օր մը իրենց կ'ընկե-
ւանայի , եւ չորսս ալ խոր տխրութեամբ մը
համակուած էինք՝ երբ հառանք Պալլըըլ :
Ընդարձակածաւալ մեռելավայրին հաղարաւոր
քարերուն դամբաններուն մէջ , որոնք յանկարծ
անկանոն , բարձր ու ցած , գորշ ու ճերմակ կամ
դեղնոտած՝ փռուած ու խռնուած էին սաղար-
դազուրկ ծառերուն տակ , մտածեցի թէ դժ-
ուար ըլլար թերեւս իսկոյն գտնել մեր սի-
րելոյն գերեզմանը . . . ուստի եւ նշան մը
ընելով հետուէն երեւցող պանդուխտ քահա-
նային որ անձկանօք կը նայէր մեզի . « Տէր
Հայր , ըսի , մէկ քահանայէ՛ գերեզման կը
փնտռենք . . . կրնա՞մ մեզի ցոյց տալ . . . » —
« Խրամեր էս , օրհնած » ըսաւ . — միտսին յա-
ռաջացանք . . . հազիւ քսան քայլափոխ ը-
րած էինք , ծառի մը մօտ ճերմակ քարաձեւ
դամբանի մը քով հասանք : Քարին վրայ սա-
ղաւարտ ու Աւետարան մը տեսայ իսկոյն , եւ
քիչ մը վարը կարդացի ,

Քանանայիս՝ որ ընդ շիրմաւս ի դաղար

— Եկէ՛ք , եկէ՛ք , մայր , հոս է . . . ձայնեցի ա-
նոնց որ կամաց կամաց դէպ ի մեզ կուգային
արդէն : Բայց մինչ զարիպ տէրաէրը իր ա-
ղօթքը սկսաւ եւ հազիւ հէգ մայրս ու քոյրե-
րը հեծկտալով չոքեցան հողին վրայ , տա-
պանագրին ընթերցումը աւարտելով՝ կարդա-

ցի վերջին տողը — «Քառասնամեայ հասակին մէջ թող զաշխարհ» եւ վարը՝

Աստ Հանգչի

Տէր Կիրակոս Քանանայ Նաուր Գարուի

Մերը՝ Տէր Բարսեղ քահանայ պիտի ըլլայ. եւ եօթսնամեայ . . . — Ա՛ս չէ, առ չէ՛, մայր՝ սխալ ենք եկեր . . . » — Ու ամէնքս ալ սրտմտած, շփոթած, սգախտաբեկ զամբողջ հետեւինք զարիւթին որ յիսուն քայլ անդին մերինն ինքն գերեզմանաքարի մը քով կը տանի մեզ, մրմնջելով .

— Էկէ՛ք . էս էլ էնցած տարւան ի , նոր ի

Կը տեսնեմ սաղաւարտ ու Աւետարան քարին վերը . ու վարը՝

Քանանայիս որ ընդ շիրմաւս ի դադար . . .

ու անունը՝ — . . . Տէր Բարսեղ քահանայի . . .

— Օրհնէ՛, տէրպապա . — Ա՛ս է , հո՛ս է , մայր՝ եկէ՛ք , կը ձայնեմ նորէն , եւ մինչ զարիւթին աւետարանը աւարտելու մօտ է ու միւսները երեսանկեալ՝ անկեղծ ու համոզուած վշտով մը զառնապէս կուլան հողին վրայ , աչքիս կը հանդիպի առաջին քերթուածիս վերջին տողը որ՝ հոս ալ՝ փոխուած ,

կը սկսի «Վաթսնամեայ հասակին մէջ» բառերով , ու՝ անփութ՝ աւելի վարը կը կարդամ .

Այս է տապան

Տէր Բարսեղ քահանայի Սամաթիոյ :

* * *

. . . Երկար փնտռութեք վերջ հազի՛ւ դասնք մեր սիրելեղն գերեզմանը . հանդիպելով երկու ուրիշ քարերու ալ որոնց վրայ քերթուածս կար , ու տակը . . . մեզ անձանօթ , աէրպաղաներ հանգիստ խիղճով կը ննջէին

Անկէց ի վեր՝ հրատարակուած ունիմ նաեւ կարծուածէն շատ աւելի բազմաթիւ քերթուածներ . . . տապանաքարերու վրայ՝ Հասգեղի , Շիշլիի , Սկիւտարի , Օրթագեղի եւլն . գերեզմանատանց մէջ , աննշան եւ շատ անգամ ինձ անմանօթ ննջեցեալներու համար — պարզ խնդրանքի մը փոխարէն — զրուած : Իսկ թէ առաջին քերթուածս ու անոր հրատարակութեան պարագաները ի՞նչ տպաւորութիւն թողած են վրաս . — սա համոզումը զոյաջուցած են իմ մէջ՝ թէ բանագոգութիւնը զարհուրելի , անբովանդակ , անմահ ախտ մըն է որ գերեզմաններու տապանագիրները անգամ կուղկուղեցու չափ յանդուգն կ'ընէ . . . մեռեալներն անգամ . եւ թէ այս հիւանդութեան ամէնէն աւելի մեր կղերականները հակամէջտ կ'երեւան

ԱՂԵՔՍԱՆԳՐ Գ. ՓԱՆՈՍԵԱՆ


ԳՐԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԳԱՆԱՌԱՅԵՆ ՈՐՐԱՆՈՑՆԵՐՈՒ

Նախորդ թիւերով ծանուցինք թէ երեք զրատէր ազգայիններ չորս օրինակ Մասիս նուիրած են Բերայի Էսաեան ու Օրթագեղի Ս. Թարգմանչաց վարժարաններուն , եւ Խաւ գիւղի Գալֆահան Որբանոցին : Այս անգամ ալ զաւառային երկու որբանոցներու եղած համանման զրական նուիրատուութիւն մը արձանագրելու առիթը կ'ընծայեն մեզ՝ Պատրիարքարանի երկու յարգելի զիւանապետները , Բարթող Էֆ. Թեւեան եւ Կարապետ

Էֆ. Խաչատուրեան որոնք մէյ մէկ օրինակ Մասիս յառկացուցին Հաճնի եւ Մարաշի Որբանոցներուն : Եթէ ներելի ըլլար որ Խըմբապետութիւնը կարծիք մը յայտնէր՝ ինքնաբերաբար եղած այս զրական նուիրատուութիւններուն առթիւ , Կ. Պոլսոյ վարժարաններէն աւելի նախապատուութիւն պիտի ընծայէինք զաւառային աղքատիկ դպրոցներուն եւ որբանոցներուն որոնց սաներուն համար հաճելի ժամանց մը ու մաքի զբօսանք մը պիտի ըլլայ , իրենց հեռաւորութեանը ու մենաւորութեանը մէջ , զրական Հանդէսի մը ընթերցումը պարագայ ժամերնուն մէջ :

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ



ԲԲ գործիքին կափարիչը բացուի, դիմացը կեցող կամ նստող ամէն մարդ սրտի տրուփում մը կ'ունենայ. անանկ կը կարծէ որ ամբողջ աշխարհք իր լուսանկարը տեսնելու կը սպասէ անհամբեր. ուրեմն պէտք է որ իր կեցուածքին մէջ արտայայտէ իր բոլոր լրջութիւնը, շնորհքը, պահցու վայելչութիւնը, որպէս զի ամէնուն սքանչացումը հրաւիրէ իր լուսանկարին վրայ:

Բայց երբ վարժուած ըլլայ, այդ քանի մը երկվայրկեանի միջոցին պարզ ու բնական երբեւայտ եւ կենդանի, — եւ մանաւանդ երբ կին մը ըլլայ, — ան ատեն իրօք լուսանկարը կենդանութեան դրոշմ մը եւ սիրտ վրդուփոյ նշոյլ մը կը ցոլացնէ: Ու կը տեսնես հոն — երբ մանաւանդ անիկա գեղեցիկ է — հոգեկան բոլոր շնորհներուն խառնուրդ, լուրջ ու թափանցող ազդուութիւն մը, պարզ բայց զգլխիչ, համարձակ՝ բայց քնքուշ փայփայող արտայայտութիւն մը, համակ հրապոյր:

Երբ լուսանկարը ալէկ քաշուած է, հոն պատկերացող կնոջ գեղեցկութիւնը կը փայլի իր կատարելագործութեանը մէջ, վասն զի հեռուէն հիացած գրեթէ ամէն ազդուոր կնկան խօսուածքը եւ շարժուձեւերը շատ անգամ կը հիասթափեն զքեզ. այս հիասթափումը վախճի կայ գոնէ՝ գեղեցիկ լուսանկարի մը առջեւ:

Այդ լուսանկարին մէջ կ'ինք՝ իր լուսնունշ արձարձ մնայովը՝ աւելի ըզձացուած, աւելի սքանչացուած էակը կը դառնայ. հոն՝ կնոջ արարչագործութեան իսկալը նիւթականացած կը տեսնես, իր թովանքը միշտ թարմ, զիտողին զմայլանքը միշտ արժարձուն պահելով: Անիկա բնութեան գեղեցիկ աեսարանի մը համառօտութիւնը կը հանդիսանայ, բնութիւն մը հեռուէն դիտուած ու սիրուած. վասն զի

միշտ չես գտներ պուրակներ՝ ուր, ինչպէս կ'երգէ բանաստեղծը, սոխակը զայլայլէ, առուակը խոխոջայ: Աւելի հազուադէպ է — մանաւանդ մեր մէջ — գեղեցիկ կին մը որ իր գեղեցկութեան չափ իր խօսքերուն հմայքովը, գեղեցկանքովը կարենայ համակել հոգիդ մեծ խանդի մը սարսուռով, անջինջ զմայլանքի բոլոր թրթռումներով:

Եւ ի՞նչ անհամ ու ագեղ կ'երեւայ զգացողի մը համար գեղեցիկ պուրակ մը՝ ուր միայն կատուի մշտնադէպ եւ կամ ազդու կռնչիւնները կը լսուին:

* * *

Ես ալ ունիմ հին եւ միշտ ափսոսուած գեղունիի մը լուսանկարը. ինծի համար միշտ ազդուոր դիմագծութեան մը վրայ ցոլացող ջինջ ու անմեղունակ նայուածքը կը վրդովէ զիս եւ չեմ ուզեր՝ այդ լուսանկարին առջեւ վերացած վայրկեաններու՝ յուշաբերել անոր ձայնը, իր խօսքերուն մերթ անդուծ եւ մերթ հեզուող շեշտերը:

Եւ որչա՞փ երջանիկ կը զգամ ինքզինքս երբ ափսոսանքս բարկութեան դառնալով, կրնամ յանդգնիլ յանդիմանելու զայն անվախ: Անիկա՝ հանգարտ ինծի կը նայի, աչքերուն մէջ միշտ այդ ջինջ ու անմեղունակ նայուածքը, չրթունքներուն վրայ միշտ կէս ժպիտ մը:

Երբեմն կ'ուզեմ զէպի անոր ամենազոդոր ու սիրաբերութեամբ արտայայտութիւններ, պատումներ, առանց բնաւ լսելու ստեղծող, դիմագրաւող, վհատեցնող, ծաղրող կամ մեղքցող պատասխաններ . . . :

Երբեմն, ներշնչուած ձայնով մը կ'արտասանեմ լուրջ ու խմտատարական ճառեր իրեն ուղղուած. խօսքս չ'ընդմիջուիր, ինչպէս էր երբեմն, անիմաստ, պաղ ու անհամ կատակաբանութիւններով. չը գիտցող ու չը հասկցող կ'ինն է անիկա միշտ, բայց հիմա

դռնէ՛ լուսանկարի վիճակին մէջ մտիկ ընել զիտէ՛ :

Երբ այդ լուսանկարը զիմացս դրած , իր ազուր նայուածքին ազգեցութեամբ աւելի մեծ խանդով ու թափով զիս շահագրգռող ընթերցումի մը մէջ խորասուզուիմ եւ կամ սիրած մէկ նիւթիս վրայ գրելու զբաղիմ , չեմ լսեր երբէք իր նուազած ձայնը որ « կը ձածրամամ կոր » հառաչէ :

Սիրտս բզկառող վիշտ մը կու գամ երբեմն թափել արտասուածքով աչքերով այդ լուսանկարին առջեւ . անոր խորունկ ու փայլիայող նայուածքը կը սփոփէ զիս , կ'ամօքէ տառապանքներս , առանց ենթարկուելու անտարբերութիւնը հազիւ սքողող կեղծ սփոփանքներուն ուր ինքը կը փնէր ճշմարիտ արդահատանքէ մը աւելի երգիծող չեշտ մը :

Երբեմն խելքիս կը փչէ — տեսակ մը յիմարութիւն դարձած է իմ այս պաշտումս թուղթի կտորին — բան մը խոստանալ առտուն լուսանկարիս , զոր երբ իրիկունը կատարելու կարող չըլլամ , սրգոյիլ , պոռալ , ջըղային տագնապ չի կայ . ընդհակառակը , այդ վճիռ ու անմեղունակ նայուածքին մէջ կը գտնեմ միշտ անդրդուելի սիրոյ մը ձաճանչացումը , առանց իսկ իմանալու զիս ստորնացնող ու վշտացնող բառ մը , արտունջ մը :

Երբեմն ուշ կու գամ եւ կամ օրերով բացակայ կ'ըլլամ . երբ վերադառնամ լուսանկարիս մօտ , այն դէմքին անդորր ու շնորհալի նայուածքին եւ շրթունքներուն կէս ժպիտին մէջ կը նշմարեմ ներող ու համակերպող արտայայտութիւն մը յաւէտ . . . :

* * *

Բայց ո՛չ . այս լռութիւնը , այս անշարժութիւնն ալ անհանդուրժելի է . կը վհատեցնեն զիս այդ աչքերը՝ ուր միշտ վճիռ ու անմեղունակ նայուածք մը կայ . այդ շրթութունքները ուր կէս ժպիտ մը ուրուադժուած կը մնայ . այդ դէմքը ուր կը ցոլանայ անգրգռելի կերպով անդորր ու շնորհալի արտայայտութիւն մը . այն կիսանդրին որ հանդարտացած ծովի մը անշարժութիւնը ունի օրուան ամէն ժամուն :

Ես կը փափաքիմ որ այդ աչքերը լեցուէին չար նայուածքով . այն կանացի փափուկ շըր-

թունքները կատաղութեան , ծաղրանքի , պրծգանքի զգացումներով պրկուէին . դէմքը անիծողի մը մլմանքով ծամածռէր . ձեռքերով ու ոտքերով զիս հալածողի մը շարժումները ընէր , բայց ամբողջ հասակը տեսնէի : Աչքերը կենդանութիւն ու շարժունութիւն վերստանային եւ թո՛ղ զիս շանթահարէին . շրթունքները երկրային եւ թո՛ղ զիս անարգէին , ծաղրէին , ատէին . դէմքը կենդանարար եւ թո՛ղ անդնդային արհաւիրքով մը զիս պալուցանէր : Վերջապէս հիմա աչքիս առջեւը դրուած սա լուսանկարը կենդանանար եւ թո՛ղ անցեալին պէս չարչարէր զիս . . . :

* * *

Պատկեր մը կը տեսնես բնութեան մէկ անկիւնը ներկայացնող . Ժայռերու վարպտոյր մը պատռելով Ժայռի բեկորներուն մէջտեղէն գահավէժ կը սորսորի փրփրապէջ հեղեղատը . ձախ կողմը՝ յամր քայլերով կը յառաջանայ գիւղացի մը : Առջի նայուածքիդ կը զմայլիս զոյնբու պէսպիսութեան , ներդաշնակութեան , եւ արդիսգին ճարտարութեանը վրայ : Սակայն օրերով նայելէ վերջ չհաս ուղեր այդ տեղուանքը տեսնել մօտէն՝ մերկ աչքով . այդ ծառերուն շրջիւնը , այդ հեղեղատին խոխոչիւնը , այդ գիւղացիին քայլերուն ձայնը մերթիկ ընել . եւ աւելի՛ն՝ այդ ծառերու վարադոյրէն անդին զմրուխտապատ վէտվէտուն մարգեր , կարկաչուն վտակներ եւ պուրակներ՝ ճռուղիւններով առցուն :

Լուսանկարն ալ այդ պատկերն է , անկատար եւ անբաւական ուրուագիծ մը կնկան որ ամբողջ բնութիւն մըն է . եւ իր հմայքը իր ամբողջութեամբ կը յաւերժանայ . իր շարժունութեամբ , իր ձայներովը , հեգնութիւններովը , չարչարանքներովը , իր ներշնչած յուսոյ եւ վհատութեան անձկութիւններովն է որ անիկա մեզ կը սարսափեցնէ՝ բայց կը զիւթէ , կը յուսահատեցնէ՝ բայց կը զգլխէ :

Կի՛նը զմեզ հռացնելու ձգտելովն է որ զմեզ աւելի՛ կը մօտեցնէ իրեն . բայց այս ձգտումին մէջ ալ զեղծում եւ արուեստակութիւն գնելը ներկի չէ : Միակերպութիւն , անսփոփոխ եւ պատկերացած սիրունութիւն , ահա թշնամին . . . կնկան հրապոյրին դէմ :

ԳԻՄՄԷՆ

ՊԱՏՈՒԱՍՏՄԸ ԱՐԲԵՑՈՒԹԵԱՆ ԴԷՄ

ԿԱՄ

ՀԱԿԱԼՔՈԼԱԿԱՆ ՇԻՃԱԴԵՂ

(SÉRUM ANTIALCOOLIQUE)



Անի տարիներէ ի վեր է որ կը լսուին վիրահատուեալ տարած յաղթանակները եւ կատարած յանգուգն գործողութիւնները՝ չնորհիւ հականեխութեան (antiseptie), այսինքն այն դիտութեան որ ամէն մանրակրկիտ միջոցներով թոյլ չտար միքրոպներուն՝ իրենց չարաչուք ներկայութեամբը վէրքերը թունաւորելու եւ վիրահատութեանց յաջող ելքը արգիլելու :

Արդարեւ, ինչ տարօրինակ եւ ապշեցուցիչ բան պիտի ըլլար լսել այսօր թէ՛ այս ինչ հիւանդանոցին վիրաւորեալներուն կամ վիրահատեալներուն մէջ հիւանդանոցի փութութիւն (pourriture d'hôpital) ըսուած համաճարակը կամ թէ շարաւաղից վարակում (infection purulente), շարաւաղոտ վարակում (infection putride), որդեծնական տենդ (fièvre puerpérale) ևն չուլած հիւանդութիւնները պատահած են : Հականեխութեան կամ որ նոյն է՝ միքրոպաջինջ արուեստին լիակատար կիրարկութեան չնորհիւ ոչ թէ վերոյիշեալ նեխական եւ մահաբոյր հիւանդութիւնները գոյութիւն չունին, այլ վիրական տենդ (fièvre traumatique) անգամ տեղի չունենար : Ընթերցողներուն կարելի է անհաւատարի թուի երբ յայտնեմ թէ այսօր զաւակ ծնող մայրերը ոչ թէ մանկածնական տենդ (շոքուս հիւսմաւը) այլ պարզ կաթի տենդ (fièvre de lait) անգամ չեն

ունենար, եթէ ծննդարեւութիւնը հակահիւսական ճշգրիտ պայմաններու մէջ տեղի ունեցած է եւ ապահովական միջոցները կը շարունակուին մանաւանդ ծննդարեւութեան յաջորդող օրերն ալ :

Բժշկութիւնը՝ վիրաբուժութեան աչքի դարնող եւ զգալի յառաջդիմութիւններուն հանդէպ՝ դարմանի տեսակէտով՝ նսեմացած դիւք մը ունենալ սկսած էր, երբ մանաւանդ անկարող կը մնար ու դժբաղդաբար կը մնայ տակաւին կարգ մը հիւանդութեանց դարմանումին մէջ, ինչպէս թոքախտը, ժանտաւտնդը, քոլէրան, մէնէնթիթը, եւն. որոնց արտաճանաչութիւնը եւ միքրոպային բնութիւնը լաւ ուսումնասիրած է սակայն :

Միքրոպներու ուսումը կամ մանրէաբանութիւնը (bactériologie) որ միքրոպապան միջոցներ ցոյց տալով փայլ տուաւ վիրահատներուն, միեւնոյն միքրոպապան միջոցներուն տարբեր ձեւով մէկ կիրառութիւնը հիմնելով՝ բժշկական դարմաններուն վարկը անհունապէս բարձրացուց եւ օրէ օր բարձրացընելու վրայ է :

Պայքարը միշտ միքրոպներուն դէմ է թէեւ, բայց բժիշկ եւ վիրաբույժ միեւնոյն քաղցիւր չեն կրնար գործածել : Միքրոպները մարդու մարմնին մէջ այնպիսի ընթացք մը կը բռնեն բժիշկներուն դէմ որ զանոնք յաղթանաբերու համար զիւսնադիտութեանէ ուրիշ ճար չմնար բժիշկին, մինչդեռ վիրահատոր սոսկ իրր ռազմապէս վարուելով կրնայ թշնամի միքրոպները բնաջինջ ընել : Եւ միթէ այսպէս չպիտի ըլլայ վիրահատին գերը, Հիւանդներու օգտին տեսակէտով՝ բժիշկը միշտ պէտք է ըլլայ խոհուն գլուխը որ որոշումը կուտայ եւ վիրա-

հատը՝ ճարպիկ եւ կարուկ բաղուկը որ կը գործադրէ : Եթէ թոյլ կը արուի ինձ հիւանդ մարմինը վարելու տեսակէտով բժիշկին եւ վիրաբոյժին մէջ բազմաթիւ մը ընել , պէտք է ըսեմ թէ ըմբիշկը Պիզմարքն է եւ վիրաբոյժը Մոլթքէն :

Բժիշկը՝ թոքերուն մէկ անկիւնը դրած Քօխի միքրոպներուն (թոքախտ) , աղիքները կրծող էպէրթի մանրէներուն (ժանտառնեղ) , խոշակը կամ կոկորդը խցող Լէօֆիէրի ցու պիկներուն (կեղծմաշկ) հետ՝ չկրնար վիրահատներուն պէս վարուելով՝ անոնց գործածած զօրաւոր հակահիստակները վերոյիշեալ գործարաններուն մէջ թափել եւ կամ այդ գործարանները կտրել նետել : Այն առեւն յոնք չինելու համար աչք հանած պիտի ըլլար եւ հիւանդութիւնը պիտի բուժէր , միքրոպները պիտի ջնջուէին թէեւ , բայց հիւանդն ալ միասին պիտի մեռնէր : Հարկ էր օրեմն առանց մարմնոյն վնասելու միքրոպները սպաննող կամ անոնց արտադրած թոյները չէզոքացնող դեղեր գտնել : այդպէս կամ դարձանք եղաւ չճարուածութիւն (sérumthérapie) կոչուած մէթոտը որ ըստ երեւոյթին մարդկութեան մեծածառն ծառայութիւններ պիտի մատուցանէ՝ եթէ , ինչպէս յուսարի է , կեղծմաշկը , ժանտախտը , մկանանց սրկումը (tétanos) , օձերէ թունաւորումը բուժելէ վերջը՝ յաջողի նաեւ բուժել թոքախտը , կարկինոսը (cancer) , դադիական արտը , մէնէնթիթը , թիֆոն եւ ուրիշ անբուժելի կամ դժուարաբար բուժելի հիւանդութիւնները :

Ինչ որ հետաքրքրական է եւ մասնաւորապէս այս յօդուածը գրելու առիթ տուած , սա է որ վերջերս շիճադեղը ի գարծ դրուած է արբեցութեան մոլութիւնը դարմանելու համար : Այլքումբութիւնը որ այնչափ բնդհանրացած եւ արմատացած մոլութիւն մը , առեւ սակ տեսակ արտաբու , չարիքներու , ժողովրդոց թիւին նուազման պատճառ եղած է , եւ որուն իրր դարման դժբաղդարար ո՛չ յորդորներ , ո՛չ ժառփակութեան բնկերութիւնները , ո՛չ քաղաքացիական իրաւունքներէ զրկումը եւ ո՛չ ալ ողելից ըմպելիներու վրայ

դրուած ծանր տուրքերը օգուտ մը ըրած են , իր բուժումը պիտի գտնէ . . . մարթին ներքեւքիշ մը շիճուկ ներարկելով :

Շճարուածութեան հիմը սա էր որ երբ միքրոպային հիւանդութեան մը միքրոպը կամ անոր վարակիչ ժահըր ինչպէս նաեւ զանազան թոյներ կենդանիի մը ներարկուին , այդ վարակուած կամ պատուաստուած կենդանիին արեան ջրոտ մասը որ չճուկ կը կոչուի՝ այնպիսի ազդու հակաթոյն կամ անդեղայ մը կ'ըլլայ որ եթէ ուրիշ կենդանիի մը ներարկուի , այդ կենդանին կամ մարդը նոյն հիւանդութենէն , թոյնէն չբռնուիր , չազդուիր , եւ եթէ հիւանդութիւնը , թոյնը իրեն փոխանցուի , կը զիջարէ : Այս է ահա համառօտիւ իր պարզութեան եւ շքեղութեանը մէջ՝ չճարուածութիւն ըսուածը : Երկու ֆրանսացի բժիշկներ , Տօքթ. Թէէպօլ եւ Տօքթ. Սաբլիէ եւ Պրօֆ. զեդադործը պատրաստած են հակադեղեան չճադեղը եւ զայն Բարիզի Բժշկական Ակադեմիային ներկայացուցած են որ յանձնարուածի մը քննութեան ենթարկած է այս կարեւոր դեղաբանական զիտունները քաջատուղ եւ հուժկու ձի մը քնարած են , այնպիսի ձի մը որ կենացը մէջ բերանը օդի դրած չէ , ո՛չ ինքը , ո՛չ ծնողքը եւ ո՛չ ալ իր նախահայրը : Այս կենդանին կ'արբեցնեն ամէն օր եւ այն առիճան կը հասցնեն որ եթէ էմիլ Զոլայի Ասօմուալին հանգուցեալ պարտն Գուրօն ողջ ըլլար եւ իր մրցակից այս չորքոտանին տեսնէր , մտա պիտի խածնէր : Իրաց այս վիճակին մէջ՝ ձիուն վիզէն արեւն կ'առնէն , այդ արեան մածանալէն վերջը անոր ջրոտ մասը այսինքն չճուկը ամպեցեալ փոքրիկ խողովակներու մէջ լեցնելով կը պահեն : Արդ , եթէ այս չճուկէն փոքր քանակութեամբ Բաքոսիէն ջերմաւոր խնկարկուին մարթին ներքեւ ներարկուի , այդ անձը ոչ թէ միայն չպիտի խմէ եւ կորսնցնէ օդի այնժարաւոր որ զինքը ակամայ եւ անգիտակցարար ամէն զինետան մէջ մէկ այցելութիւն տալու կը մղէր , այլ այդ ծարաւին տեղ ողելից ըմպելիներէ ստակալի նողկանք մը պիտի զղայ եւ անոնց հօտը անգամ առնել չպիտի ուզէ :

Թիշեալ գիտունները բնականաբար նախ կենդանիներու վրայ կը փորձեն այս շիճադեղը ,

օրինակի համար հաւերուն, հնդկախոզերուն եւ ուրիշ անասուններու վրայ զորս կանխաւ արբեցուծեան վարժեցուցած էին եւ յաջող արդիւնքներէն քաջակերուելով՝ մարդոց վրայ գործադրել կը սկսին: Հարկ չկայ ըսելու որ արբեցողներուն մէջէն շատ խղճամիտ ընտրութիւն մը կ'ընեն, այսինքն կը զատեն այն խմողները որոնք չեն ընդունած երկրաշտիական այն անյեղլի օրէնքը թէ երկու կէտերու մէջ էն կարճ ճամբան ուղիղ գիծն է, այլ կը դաւանին խորին հաւատքով թէ կոր եւ զիկզակ գիծն է՝ մանաւանդ երկու պատերու մէջտեղ: Այն ատեն գնդամուղի օրէնքով երբ արբեցողը կոր գիծով մը պատին զարնուի՝ այդ բաղիտումին հակահարուածը զինքը միւս պատին կը տանի եւ այսպիսի արագ եւ զիկզակ ընթացքով մը եթէ պատահարաւ իր տանը դրանը զարնուի եւ դուռն ալ բացուի, ներս

կը մտնէ եւ կամ աւելի ճիշդը՝ ներս կ'իյնայ: Այս դատակարարին պատկանող բոլոր մոլեռանդներն են որ շճագեղին ներարկութեամբ հրաշալի կերպով դարձի եկած եւ իրենց խորին դաւանանքը փոխած են: Տեսնելու է այժմ, կ'ըսեն յիշեալ գիտունները, այս դարձի եկողներուն գաւնուկի պէս հեղ եւ խոնարհ վարձուքը, մաքրակցոն եւ ժուժկալ կենցաղը: Ուղիղ, անխոտոր եւ անյրէպ՝ իրենց տունը կը դաւանան եւ եթէ զարմանք մը եւ դարն վիշտ մը ունին, այն է որ ասակաւին գինեւտունները չեն խափանուած ու իրենց սերունդը դժբաղդաբար այլատեբած է . . . : «Հաւատուրացնե՛ր» կը գոչեն գինեպանները: Բայց ի՞նչ օգուտ որ Բաքոսի զայրոյթը իր կլորիկ փորին մէջ պիտի մնայ:

ՏՈՒԹ. Ե ՄԱՍԻՍ

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Շարժումն ազգ. լուրերուն մէջ ամէնէն ուշագրաւն էին Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան վերաբերմամբ եղած հրատարակութիւնները երկուշաբթի առտու Սուրհանդակ ծանոյց Սառն Ժողովին նոյն օրուան արտասովոր գումարումը՝ Դատական նախարարութեան կողմէ Պատրիարքարան ուղղուած պաշտօնագրի մը վրայ՝ կաթողիկոսական ընտրութեան փութացուիլը հաղորդող: Արեւելք եւ Բիւզանդիոն նոյն օրուան իրենց թիւերով փութացին համառօտիւ ծանուցանել Ազգ. Վարչութեան գումարման արդիւնքը, եւ անկէ ետքը՝ յաջորդաբար երեք օրաթիւրը կը շարունակեն իրենց լրացուցիչ տեղեկութիւնները որոնց մէկ ամփոփումը կարեւոր կը դատենք՝ մեր ազգային բաժնին համար:

Սառն Ժողովին մէջ Պատրիարք Սրբազանը մանրամասն բացատրութիւններ տալէ եւ ժողովականներուն կողմէ խորհրդակցութիւններ կատարուելէ ետքը, Թագրի մը պատրաստուեցաւ՝ մատուցուելու համար ուր որ անկ է: Ժողովէն ետքը, Ս. Պատրիարքը Կայս. Պալատ գնաց՝ Ա. գործադատարին հետ Յաջորդ առտուն, Պատրիարքարանի յարաբերական զիւանի տեսուչը Ն. Սրբազնութեան ընկալարանը հրաւիրուեցաւ՝ պաշտօնաթուղթերու խմբագրութեամբ զբաղելու:

Սառն Ժողովը, իր երկուշաբթիի գումարման մէջ, որոշած է նաեւ որ հարկ եղած չըջարեականները զրկուին Կիլիկիոյ թեմերուն: Հաւանաբար երկրորդ գումարման մը պէտք պիտի ունենայ՝ Ազգ. Պատրիարքարանի պատուիրակ Սապայեան Տ. Սահակ եւ պիսկոպոսին զրկուելիք հրահանգին վերջնական քննութիւնը ամբողջացնելու համար: Այդ հրահանգին հետ մէկտեղ երուստագէտ պիտի զրկուին նաեւ լուսարարապետ Սրբազանին պաշտօնը ծանուցանող եւ զինքը Ատանայի կրօնակալութեան յանձնարարող պետական թուղթերը:

Կ'ըսուի թէ պետական պատուիրակ Պէհապէյ — կրօնական գործոց տեսուչի օգնականը — մօտ օրերս պիտի մեկնի՝ Ատանա:

* * *

Երեքշաբթի օրուան Կրօնական Ժողովին մէջ Ս. Պատրիարք Հայրը կարգաց նոյն առտուն իր տանը մէջ պատրաստուած խնդրագիրը ի մասին Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան եղանակին: Ժողովական Հայրերը իրենց համամատթիւնն ու դժուարութիւնը յայտնեցին: Յիշեալ պաշտօնագիրը Պատրիարքարանի Ա. Գործադատար էֆէնտիին միջոցաւ մատուցուեցաւ յաջորդ օրը:

ՕՏԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՊԱՌԱՒԻԿԻՆ



ՈՐԱՌԱՄԱԿ ու յողմած , չոր փայտերու ահաղին բնա մը չալկած , կը քալէր խեղճ պառուր , անտառի մը ճամբուն երկայնքով , ամառուան իրիկուան մը չըքելու թեւանք մէջ :

Ամայի էր վայրը ուր իրեն հանդիպեցայ . — ամայի եւ զեղեցիկ ինչպէս ամէն երազուած եղևնները : Կիւրիւսքօայի մէջ էր , սպանիական մեծ Պիւրէներաններուն եւ իրենց կանանչ անտառներուն մէջտեղ : Ամէն կողմէ գեղատեսիլ , հանդարտիկ եւ անվթար մնացած արտեւանները՝ իրենց լսիկ ծառերու զրուագներուն տակ , զէպի երկնային անսահմանը կ'ելլէին : Վարը , ծործորի մը մէջ , գետակ մը կը տարածուէր հայելանման , ցոլայնելով միայն բաղեղի , պտերի ճիւղեր , յունիսի թարմ կանանչներ , տերեւներ : Ու ծաղիկներու մեծափառութիւնը , այս ստուերի , կենդանի ջուրերու դազվ երկրին մէջ , անտուփս եւ մեծաշուք բան մը ունէր , որպէս թէ պարիկներու անցքին համար եղած ըլլար :

Բայց խեղճ պառուր որ բոլորովին յողմած կը քալէր իր բնովն տակ , բան մը չէր տեսներ , իրերու այս անախմբութենէն , իր արևրամած աչքերովը : Ուժտապառ քալում քով , գլխիկոր եւ ճակտին վրայ տատապանքի երկու կնճիռով՝ գոռաբութեամբ կը փութար երթալ զէպի թշուառութեան օթեւան մը , ուր իր վերագործը պիտի ողջունուէր անժպիտ եւ առանց ցնծութեան : Ու իր կերպարանքը այնքան պարկեշտ եւ այնքան բարի էր , ասով հանգրծ այնքան խոնարհ եւ այնքան որոշապէս համակերպած : Քաղաքավա-

րութեան համար ետ քաշուեր էր ճամբուն եզերքը , իմ գալստեանելով , իբրեւ թէ աւելի յարգալից անջրպետ մը զնելու համար ընդ մէջ գոհիկ արարածին , որ կը կարծէր ըլլալ եւ տոհմիկ անցորդին , որ կ'երեւայի իր աչքին :

Տէր Աստուած , ի՞նչ ընելու էի քիչ մը օգնելու համար , այս այնքան խոնարհամիտ պառուրին : Ահա յանկարծական գութ մը օրտիս մէջ կը ծնէր , վասն զի իր տառապանքին բարի նայուածքին հանդիպեր էի : Բայց ի՞նչպէս ընէի զինքը աւելի չնուազեցնելու համար : Ոստերու խուրճը , զոր այնքան ցաւապին կը կրէր իր մաշած կանակին վրայ , ողորմելի արժէք մը ունէր , ու շատ զիւրին էր իրեն ըսել :

— Նեաէ՛ բնուր կանակէդ , խեղճ կին , եւ անոր տեղ ընդունէ՛ սա ճերմակ ստակները :

Կը վախճայի սակայն որ զինքը կը վշտացնեմ . այնքան աշխատութենէ յետոյ՝ զոր անշուշտ տուած էր անտառին մէջ այդ բարակ ճիւղերը հաւաքելու համար : Եւ սակայն որքան շատ կը նայէի իրեն , այնքան քիչ կը համարձակէի ողորմութիւն մը տալ անոր . իր կարկատուն զգեստները տակաւին վայելուչ եւ մաքուր կ'երեւային , ապահովաբար մուրացիկ մը չէր ան , բայց թերեւս համեստ ազարակի մը մէկ հանին , կամ դաշտերու աննշան մէկ աշխատողը , քամահրուած՝ փանտաբարոյ դիւղայններէն :

Ու այս վայրը հիանալի էր , այս վայրը՝ ուր պառուր կը քաշկոտէր կը տանէր իր յողմութիւնը , ամայի էր , փառաւոր , հանդարտիկ եւ գրախտային : Կարծես թէ մարդ հոն բարեբաւտիկ երկրի մը մէջտեղ կը գտնուէր , մենաշնորհուած եւ հազուադէպ պահու մը . վերացման մը , ապրելու արեւցութեան մը

մէջ՝ մարդ կը կրէր միանգամայն եղանակին սխրանքը եւ ժամուան սխրանքը, — իրիկունան գեղեցիկ եւ հանդարտիկ ժամուան :

Մօտաւոր կամ հեռաւոր, փեկոնի անտառները աստիճան աստիճան կ'երեւային միշտ թարմ եւ հաւասար, երկնաբերձ արտեւաններէն մինչեւ վարը, մինչեւ խոտերու, ծաղիկներու, ջուրերու ցած տեղերը : Մեր վարեւը, յստակ գետակը, որ կը ցոլացնէր գագաթները, ծաղիկներէ կղզեակներ ունէր. — կղզեակներ զարդարուած, կողովներու պէս, խոշոր մանիշակագոյն ծառերով, վարդադոյն վայրի ծաղիկներով, ու տակաւին չեմ գիտեր ինչ ջրաբոյսերով, ճերմակ հովանեակներու պէս բացուած : Եւ, ճամբուն եզերքը, իսկոյն կը սկսէր պատուական հող մը, թաղիւցած այն քարաքոսներէն, մամուռներէն որ կ'աճին միայն երկար տտեն ռաք չկոխուած վայրեր : հող մը որ աշխարհքին չափ հին կ'երեւար — եւ որուն խուռափիլը ու կորսուիլը կը տեսնուէր փեկոններու խորհրդաւոր կամ մարին տակ, գորշագոյն յաղթ ոտակով լեցուն անտառին տակ : Մարդ կը զգար որ սեղիւղէն ի վեր հովիւներ եւ ոչխարներ միայն կոխոտած էին այս փափուկ գորգերուն վրայ, եւ հին ժամանակուան խաղաղութիւնը կը արեւը մեղմագին բոլոր այս կանառնչ երկրին վրայ :

Բայց, տարօրինակ անկանոնութեամբ մը զիւղացիները որ այսօրինակ զրախաներու մէջ կ'ապրին, չեն կրնար դանոնք հատինալ ու տեսնել — եւ խոշոր խուրձով բեռնաւորուած պառուը կը քալէր այս սխրանքներուն մէջտեղէն այնքան թշուառ որքան եթէ անցնէր քաղաքներու որ եւ է ծանծաղուտ տեղերէ, արաւտեսիլ պատերու միջեւէն :

Հիմայ ճամբան զառիվեր էր, դժուարագնաց կը դառնար այլեւս . փայտահար կնոջ քալուածքը աւելի անկարգ կ'երեւար, աւելի դժուար, ու լսած էի յոգնութեան զառն հառաչանք մը որ ելեր էր չոր փայտերու բռնին տակէն . . . Ուր կ'երթար այդ պառուը : Ու ի՞նչ ընելու էր, ի՞նչ խորհելու էր իրեն օգնութեան հասնելու համար :

Փառք Աստուծոյ, վերջապէս զիւղը երեւցաւ, հոն, խիստ մօտը, ճամբան դառնալուն

իր գիւղն էր անշուշտ, իր սպառիչ ճամբորդութեան վախճանը : Լեռներու եւ անտառներու խորը շինուած՝ շատ բարձր զիրք մը ունէր զիւղը, որ յանկարծ կը լայննար, կը գծադրուէր հնօրեայ ստուերադիւծով, թխագոյն տուներով ու սև գանգակապուծով, հին տոննի պաքսական ոճով շինուած . բոլոր ասոնք, անշուշտ անշարժ կեցած երկու երեք դարերէ ի վեր, քով քովի ծերացած, յամբար սպառած միասին անձրեւներէն եւ արեւներէն, ու այս ամէնը գերագոյն արհեստով մը շտկուած, աչքերու ամենամեծ հաճոյքին համար :

Սակայն այս իրերուն հրապոյրը գրեթէ միմիայն օտարականներու, փափկասէշներու եւ նրբաճաշակներու վերապահուած է — այն մարդոց համար չէ, որ հոն ծնած են ու հոն կը մեռնին : Եւ այս մտաւարկար երեւոյթով վայրերը շատ մը բուսական տխուր գոյութիւններ կը պարունակեն իրենց մէջ . երբեմն ալ, իրաւ է որ, յորդառաւ եւ քաջաուղջ կրկնապարգուծիւններ . — բայց այնքան քիչ, — ու նաեւ այնքան վաղահաս, կողկողագին ու լքուած ծերութիւններ :

Քայլերս յամբարացիք էի, փայտահար պառուէն չհեռանալու համար . քովի ի վեր կը քալէի :

Եւ մօտնք միասին այն կորսուած զիւղը, իրիկունայն այն հեշտալի ժամուն, արեւամուտին, անժեշխսեմ քիչ մը առաջ : Երկու եւ րեք նեղ միջին փողոցներ . երկու երեք կըրպակներ մոյկի, տպածոյլ, ասպագէնի, նախնական եւ կոշտ առարկաներու . յետոյ պատկառելի եկեղեցին, իր գերեզմաննոցովը եւ գնդակի խաղարանովը : Եւ շուրջը ամէն կողմ, կը բաժնեն տախարհքէն մարդկային այն հնօրեայ խմբումը, լոկի ամայութիւնները Գանդապրեան լեռներու, եւ անոնց փեկոնի մեծ մայրեւորները :

Ուրեմն բան մը բրած չպիտի ըլլայի խեղճ կնոջ համար զոր զիպուածը տուած էր ինծի իրրեւ ճամբու ընկեր : Պիտի երթար թաղուէր հոն, այն միջին տուններէն մէկուն խորը, պիտի գնէր իր բեռը անկիւն մը, յետոյ, ապահովապէս գէշ ընդունուէր պիտի, մէկէն միւսէն նախատուած, ինչպէս կը պատահի

այլ եւս չաշխատող ծերերուն , իր խշտեակին վրայ պիտի նետուէր գիշերը անցընելու համար : Ու վաղը պիտի սկսէր իր անօգուտ հանիկ կեանքը , որ մահուան կը սպասէ , առանց յոյս ունենալու մեղմացումի , ո՛չ ալ դորովի , մինչեւ անձկութեան ու վերջնական գալարման ժամը . . . : Ո՛հ , խեղճ պառու գեղա-հայեաց , ի՞նչ կարեկցութիւն կը զգայի սա-կայն սրտիս մէջ , իր վաստակաբեկ կուրծքէն ելած խոշոր հառաչանքը լսած ըլլալուս հա-մար , զատիթափին վրայ :

Բայց ահա , ամայի փողոցին ծայրը , փոք-րիկ աղայ մը երեւցաւ , որ գիծիկ գիծիկ կը քայլէր սալայտատակին վրայ , պառուին սպա-սելու կերպարանքով ու անոր առջեւը գա-լով : Եւ , զայն ճանչնալուն պէս , սկսաւ վա-զել , թափիկները պառուին երկնցուց ըսելով . « Մե՛ծ մայրիկ » : Երկու երեք տարեկան մի-նինիկ մըն էր , քուրջեր հագած , տառապած դէմքով , շատ անգեղեկայ , որ սակայն կը նմա-նէր պառուին . նոյն արտայայտութիւնը , նոյն աչքերը , պարկեշտ ու բարի : Պզտիկ արա-րած մը որ կը սկսէր ժպտելով , խոնարհու-թեան ու մշտաան թշուառութեան կեանքը , հանգոյն այն կեանքին զոր իր հանին պիտի վերջացնէր . . . :

— « Մե՛ծ մայրիկ » :

Պառուը բազուկները բացաւ անոր , եւ , իր գործովով լի ուրախութեան յափշտակու-թեանը մէջ , իր դէմքը վայրկենաբար շողաց ու կերպարանափոխ եղաւ : Իրեն ի՞նչ հոգն էր երկար ճամբան եւ ասոր անոր քամա-րանքները , քանի որ այս պղտլիկին սէրը ու-նէր ինք : Այլ եւս չկային տառապանքի կոճիւ-րներ , չկային յոգնութեան հառաչանքներ . ժպիտ

մը զինքը կերպարանափոխ ըրած էր : Ու ան-չուշտ կռահած ըլլալով իրեն համար զգացած կարեկցութիւնս , զլուսը դէպի ինծի դար-ձուց , իրրեւ ապահով ըլլալու համար թէ ա-դէկ տեսած էի այն աղան , եւ ըսելու կեր-պով մը .

— Նայէ՛ մէյմը , պաշտելի չէ՞ միթէ , եւ իրաւունք չունի՞մ անով պարծելու : Կրնա՞ս ըսել տակաւին թէ արգահատելի եմ , ասանկ թոռ մը ունենալէս վերջը . . . :

Ու արդէն իսկ կը հեռանայի ժողվել տա-նելով իմ անօգուտ կարեկցութիւնս , երբ , զանգակատունին բարձրէն սկսաւ անժեշխաւը հնչել : Պառուը կողնակին ձայնը լսելով կանգ առաւ երեսը խաչակնքելու համար , եւ , դէպի գետին հակած դէմքին արտայայտութեանը մէջ երեւցաւ միամիտ ու խորին հաւատքը , ճշմարիտ հաւատքը , որ չի խախտիր ո՛չ ծե-րութեան առջեւ , ո՛չ մահուան առջեւ :

Ո՛հ , այն ասնն , այս կորսուած վայրին խողաղութեանը մէջ , որ , անտառներու մէջ-տեղ կը սկսէր ննջել ամառուան մթնշաղին տակ , ես , մշտնջենական թափառողս , եկած էի հոն մէկ իրիկուան մը համար , այս պար-զամիտներուն ու անխլիրոններուն մէջ , տեն-չանք մը ունեցայ նուաստանալու եւ ըսելու .

— Ազնիւ պառու , դուն ալ քու կարգիդ գութ ունեցիր , եւ հողուոյս փրկութեանը հա-մար աղօթք մը ըսէ , որովհետեւ , երկուք-նուս մէջ , զիսցած եղիր , ես եմ յաւիտենա-պէս թշուառագոյնը . . . :

Թարգմ.

Բիւռ Լոյի

ԵԻՓԻՄԷ ՕՏԵԱՆ

ՈՒՂԵԻՈՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Մասիսի յաջորդ թիւով պիտի սկսինք չորստարակել Ուղեւորական Յիշատակներու շարք մը զոր մեզ ուղղած է զրասէր բարե-կամ մը , Վարդընշքանյնի հրատարակմանը առթիւ , — ատենօք ինքն ալ այցելած ըլլա-լով այդ գեղազուարճ վայրը ու չրջակաները որոնց նկարագրութիւնը կ'ամփոփէ նամակա-ձեւ յօդուածի մը մէջ : Այդ Նօթերուն հրա-տարակութիւնը նոր պէսպիսութիւն մը պիտի ընծայէ մեր նիւթերուն :

ՄԱՍԻՍ, Ի ՅՈՒՇԱՏԵՏԵՐԸ



ԼՐԱԴՐԱԿԱՆ երկու համեստ՝
բաց նշանակալից. նուիրատու-
ութեան լուրեր ունինք արձանագրելու մեր
այսօրուան Յուշատեարին ճակատը : Բիւզան-
դիոն՝ իր հաղարերորդ թիւին հրատարակ-
մանը առթիւ, զոր աօնեց յունուար 25ին,
տարը սփի նուիրեց ի նպատակ գաւառային
կարօտակներու եւ որբերու, եւ օրհնութեան
գիր ստացաւ Ս. Պատրիարքէն : Պատրիար-
քական օրհնութեան գիր ստացաւ նաեւ Սուր-
նահրակ, որ Ամանորի առթիւ որբերուն կա-
ղանդէքի համար 1071½ զրշ. հանգանակած
ու Նպաստից Յանձնաժողովին յանձնած էր :
Այս բարեգործական կրկին նուէրներուն կա-
րեւորութիւնը հոն է մանաւանդ որ մեր հրա-
պարակադրական բարքերուն լուազոյն մէկ
կողմը երեւան կը բերեն, ինչ որ վերջին տա-
րիներս ի յայտ եկաւ արդէն զանազան առիթ-
ներով եւ ուրիշ ազգ. օրաթերթերու կողմէ
ալ : Ամէնէն փայլունը այդ երեւոյթին՝ տես-
նուեցաւ 1898ի սկիզբը, երբ օրաթերթ Մա-
սիւն, որուն խմբագրութեան գլուխը կը զբա-
նուէին Գրիգոր Զօհրապ եւ Հրանտ Ասա-
տուր, Ծաղկազարդի իր բացառիկ թիւին ար-
դիւնքովը 200 սփիէ տուելի գումար մը հան-
գանակեց Ազգ. Հիւանդանոցին ի նպատակ :
Անցած տարի, այս միջոցներս, Արեւելք ալ
սկսաւ հանգանակութեան մը որ 2000 զրշ.ի
մօտ գումար մը արտադրեց գաւառի կարօտ-
եալներուն ի նպատակ եւ յանձնուեցաւ Նպաս-
տից Յանձնաժողովին : Ռեւենն, ընդհանուր
կերպով, Պոլսոյ հայ մամուլը ներկայացնող
զլխաւոր թերթերէն իւրաքանչիւրը պատեհ
առթիւ գեղեցիկ ներշնչումը ունեցած է, եւ
կրնայ ունենալ այսուհետեւ ալ, զործնա-
կան առաջոյցը տալու թէ բարեգործութեան
համար հանրութեան ուղղած իր հրաւերները
որքան անկեղծ են, քանի որ այդ թերթե-

րուն վարիչները ու խմբագրութիւնները նիւ-
թական ու զրական զոհողութիւններով իրենք
ալ իրենց նուէրը կը ձգեն բարեգործական
բազմակարօտ գանձանակին մէջ :

Շարժուման արձագանգներուն մէջ, Կիլի-
կիոյ կաթողիկոսական ընտրութեան վերաբե-
րող լուրերէն զատ — զորս ամփոփած ենք
առանձին գլուխի մը տակ — քիչ շատ խօս-
ուեցաւ այն « Կըլսենք թէ . . . » ներուն վրայ,
որոնց նայելով՝ Գարակէօզեան կտակով կա-
ռուցանելի Որբանոցը Եփեսոսի տարրեր
տեղ մը, կեցրան միջավայրի մը մէջ հաստա-
տելու խորհուրդ կայ : Երանի՛ թէ իրաւ ըլ-
լար, եւ մանաւանդ իրականանար այս խոր-
հուրդը : « Աչքէ հեռու, սրտէ ալ հեռու » ժո-
ղովրդական առածը այնքան գառն ճշմար-
տութիւն մը՝ զարձած է Ս. Յակօբի Որբանո-
ցին համար, որուն վրայ կը գրենք ու կը խօ-
սենք այնպէս ինչպէս Վարդապ Վանքի կամ
Մարաշի որբանոցին վրայ — տարածութիւն՝
եթէ ոչ անցիտակցաբար, — որ Գարակէօզ-
եան կտակի Յանձնաժողովը ու կտակակատարը
ազգին սիրելի փափաղներէն մէկը կատարած
պիտի ըլլան՝ զոնէ Շիշլիի պէս մօտաւոր տեղ
մը որոշելով իրենց հիմնելիք հաստատութեան
համար :

Երբ այս սողերը կը գրենք, Ուսումնա-
կան Խորհուրդը իր սովորական նիստը կը
գումարէ արտասովոր՝ ամբողջութեամբ մը :
Տօքթ. Վահրամ Թորգոմեան ետ առած է իր
հրաժարականը ու կ'ատենապետէ ժողովին .
ներկայ կը գտնուի նաեւ Տրդատ պէյ Տատ-
եան, նոյնպէս ետ ժողովը իր հրաժարականը :
Խորհուրդը մասնագէտներ ալ հրաւիրուած են,
կ'ըստի : Իսկ ինչ որ բացառիկ հանգամանք
մը կ'ընծայէ այս գումարման, Պատրիարք
Սրբազանին նախագահութիւնն է՝ զլխաւորա-
բար ուսուցչական կիրակնօրեայ գաղափարու-
թեանց ծրագրին քննութեանը համար : Բարի

նշան մըն է ասիկայ , եւ յուսալ կուտայ որ տեսակին մէջ միակը չըլլայ այս հանդիսաւոր գումարումը : Գիտենք որ Ուսումնական Խորհուրդին որոշումները Պատրիարքական բովէն կ'անցնին՝ գործադրութեան գրուելէ առաջ , բայց Պատրիարքի մը անձնական ներկայութիւնը Ուսումնական Խորհուրդին նախագահական ակտին վրայ , ու մասնակցութիւնը անոր խորհրդակցութիւններուն , մեծապէս կը բարձրացնէ այդ մարմինն prestige հոգաբարձութիւններուն ու դաստիարակներուն աչքին , եւ առօրեայ ընթացիկ գործերէ դուրս՝ կրթական ընդհանուր գործին մղում տալու կը նպաստէ :

* * *

Արձագանդ մը Երուսաղէմէն :

Երեմիա արքեպիսկոպոսին կողմէ Ս. Յակոբեանց վանքին 1000 ոսկի թողուած ըլլալու զրոյցը կը հերքուի : «Հանգուցեալ եկեղեցականը արծաթասէր չէր , — կը գրէ մեզ թղթակից մը , — մանաւանդ որ իր ունեցած տարեկան հասոյթին , որ 90 գաղղ. ոսկիէն անդին չէր անցներ , կէսէն աւելին Խարբերդի իր կարօտ աղգականներուն ղրկելով՝ մընայած ո՞վն ալ ինքը կ'ապրէր , ուստի 1000 ոսկիի անդ՝ շատ մեծ բան կ'ըլլար եթէ գոնէ 1000 զրշ. գանուած ըլլար իր բնակած սենեակին մէկ անկիւնը , իր մահէն ետքը : Երեմիա արքեպիսկոպոսը , որչափ որ գիտէր , իր միաբանական յիմնամաս չըջանին մէջ հազիւ յաջողած էր տարեկան 45-50 ոսկի եկամուտ բերող կալուած մը թողուլ վանքին , Միաբանութեան բարենպաստի անդրական սովորութիւններուն համաձայն » :

Երուսաղէմէն գրուած այս տողերը յուսախաբութիւն չեն պատճառել , բայց մեզի վստահի կը մտածենք թէ իսկապէս ինչ մը չունենալ ու չի ձգել իր պատկանած վանքին — քանի որ եկեղեցականներու միայն ինքնակրօնը — քան թէ թողուլ գումար մը կամ կալուած մը որ անհատնում բանակցութիւններ ու սիրտմաշութեան սակղծելէ ուրիշ բանի չի ծառայեր շատ անգամ :

* * *

Երկու անխոնջ աշխատաւորներ , Տոքթ.

Տաղաւարեան եւ Մելքոն Էֆ. Նազիկեան մէջ մէկ պզտիկ հատոր հրատարակեցին վերջին եօթնեակին մէջ : Առաջինը աստուծոններու եւ դեղորէից յատկութեանց բառացուցակ մըն է :

Գ'ենթադրենք թէ երիտասարդ բժիշկը՝ այդ տեսարակին պատրաստութեանը համար շատ աւելի յոգնած է ինչ որ չեն ցցուներ անոր քանի մը թերթիկները : Կ'արժէ որ ձեռնհաս ներ իրենց կարծիքը յայտնեն այդ բժշկական բառագրային վրայ :

Նազիկեան էֆ.ին գործը — իր իններորդ թարգմանութիւնը գերմաներէնէ — ժողովուրդին համար գրուած հատոր մըն է Բրոֆ. Ժ. Ռուհէմանի կողմէ , եւ կը խօսի իւրօրինակ եւ անոր դարմաններուն վրայ : Տոքթ. Յ. Տէր Ստեփանեանի Մանչեսթր թշնամիին պէս , Թե ի՞նչ է իւրօրինակ ալ բարոյապէս ու ֆիզիքապէս փրկարար դեր մը ունենալու սահմանուած երկասիրութիւն մըն է եւ անոր ընթերցումը ջերմապէս յանձնարարուելու արժանի :

Կը յուսանք յառաջիկայիւ մասնաւոր Գրախօսական մը նուիրել այս հատորին , մեր բժիշկ աշխատակիցներէն մէկուն կողմէ գրուած : Մնաց որ , արդէն գործին սկիզբը գրուած է Տոքթ. Ե. Շահինեանի ընդարձակ մէկ նամակը որ հայ ընտանիքներուն , հայ ընթերցողներուն համար այս թարգմանութեան ընծայած օգուտները կը պարզէ ձեռնհասօրէն :

Շնորհաւորելով թարգմանիչը իր այս նոր երկասիրութեանը համար , առիթը յարմար կը սեպենք հրապարակային փափագ մը յայտնելու որ այս տեսակ ժողովրդական-բժշկական հատորներու հրատարակման մղում արուի մեր մէջ , հեղինակութեամբ կամ թարգմանօրէն , ծնողքներուն հասկցնելու համար իրենց զաւկները պզտիկ հասակէն կրճող հիւանդութեանց ինչ ըլլալը ու դարմանումին եղանակը : Դատադիրքերու չափ օգտակարութիւն ունին անոնք :

Արժուեսէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. Մ. ՍԹԵՆՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինանսըր Եօզուլու , Կ. Պոլիս

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ստացանք Տոբթ. Ն. Տաղաւարեանի պատրաստած մէկ նոր հրատարակութիւնը «ԲԱՌԱՅՈՒՑԱԿ ախտանշանց եւ դեղորեից յատկութեանց» ֆրանսերէնէ հայերէն :

Ի Ի Ն Ի Օ Ն

ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնուած 1828—1829 ին



ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀՐԻՅՀԻ ՃԻԻՂԻՆ

97 Միլիոն

ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԵՆՍԱՅ ՃԻԻՂԻՆ

137 Միլիոն

Ընկերութեան գրամատուենն է
ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Պուլկարիոյ Տնօրէն
Սիւնն Էֆ. Քայսերեան

Կենաց ճիւղին տեսուչ
Միհրան Էֆ. Տէր Ներսիսեան

Կ. Պոլիս, Կալաթա, Թահտապուրուն խան
Օսմ. Պանքային դէմ


THE INTERNATIONAL BROKER

(Ծանուցում)

Այն բոլոր վաճառականները, նաւորները, խաւարիւնները, խաւարական մարդիկը, կալուածատէրները եւ մասնաւոր անձեր որոնք գնելու կամ ծախելու բան մը ունին, ինչպէս տուն, շինութեան տեղ, հողեր, հանքային հորեր, գործարաններ, անւարական տուններ, բաղնիքներ կամ զանազան ապրանքներու ծրարներ, մեքենաներ, եւայլն, ինչպէս նաեւ այն տեսակ մարդիկ որոնք կ'ուզեն ուրիշ մը հետ ընկեր ըլլալ կամ ընկեր մը կը վնասեն, հետազոտութիւններու, անւարական գործառնութիւններու, սենտիքաներ եւ ընկերութիւններ կազմելու եւ կամ թէ անւարական որ եւ է գործ մը աշխարհիս որ եւ է մէկ մասին մէջ կատարելու համար, պէտք է որ կարգան, բաժանորդ գրուին (տարեկան 2 շրին) եւ ազգարարութիւններու տան վերջուած նպատակներէն միտն համար, կամ պատասխաններն եղած ծանուցումներու որոնք կը հրատարակուին The International Brokerի մէջ. հասցէն 11, Southampton Row, London W. C.

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ, բժիշկ եւ մասնագէտ յղային տկարութեանց, ստամոքսի, աղեաց հիւանդութիւններու, ծննդամիջական եւ գաղղլական ախտերու: Բերա, Թաղաւմ փողոց, թիւ 10, ամէն օր կէս օրէ վերջը:

ՏՈՔԹ. Ն. ԹԻԻԼԵԱՆ, բժիշկ-մանկաբարձ, հաստատուած է Մաքրիքէոյ Սաղըզ Աղաճ, Արդարեան դեղարանին դէմը: Հիւանդ կ'ընդունի ամէն օր (երեքշաբթի օրերը՝ կէս օրէն վերջ ձրի): Երկուշաբթի եւ ուրբաթ օրերը, ցորեկէն ետքը կը գտնուի Սամաթիա, իր նախկին բնակարանին քով: Կը դարմանէ ամէն տեսակ հիւանդութիւններ եւ կը կատարէ վիրաբուժական գործողութիւններ մեծ ճարտարութեամբ:



Ն Ի Ո Ի Հ Ո Մ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵԼԱՆ

Որ կը մրցի միւս բոլոր կարի մեքենաներուն հետ

ՊԱՐԶՈՒԹԵԱՄԲ

ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՄԲ

ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ

ԹԵԹԵՒՈՒԹԵԱՄԲ

ԱԺԱՆՈՒԹԵԱՄԲ

Թուրքիոյ համար միակ ներկայացուցիչ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Կ. ՄԻԱՆԵԱՆ

Կեդրոնաւելին, Սերքէնի, Բէօրրիլի խան, Թիւ 3

Մասնաճիւղ, Ղալաթիա, Պէօլիք Միլլէթ խան, Թիւ 33

Գնողներու համար վնասման եւ ամեն տեսակի դիւրութիւններ



ԹԷՅԻ

ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ամէնէն դժուարահան նաւակներն
անգամ գոնացնող :

ԵԱՎՐՈՒԵԱՆ

ԵՒ

ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

թէյի խառնուրդները

ԱՌՈՂԶԱՊԱՀԱԿԱՆ

ըլլալու յաջութիւնը եւս ունին :



Ետլուեան և Իսա-
գուլեան թէյի խառ-
նուրդներու վաճառա-
տունը կը գտնուի Կ.
Պօլիս, Ճէլալ պէյ
խանին տակ, Թիւ 40 :

Ուշադրութիւն վաճառասան մարտային

Յ. ՄԱՏԹԵՍԻԱՆ ԹԵԼԵԿՐԱԶԻՆԱՏՈՐ
ԵՄԽԵՌԻ ՆԱՆԾ Է, ԲԱՑԱՌԻԿ ԳԻՆԵՐՈՎ, ԸՆՏԻՐ ՏԵՐԱԿ
1,000,000 ՆԱՄԱԿԻ ՊԱՀԱՐԱՆԵՐ
Պահանջել օրինակներու հաւաքածուն ՁԻԿ
Գաւառներէ 40 փարայի թղթադրում դրկել փոքրայի ծախսուց համար :
Յ. ՄԱՏԹԵՍԻԱՆ ՖԻԼԵՃԱՆԱՆՃԱՐ ԵԶՈՂՈՒ, Կ. ՊՈԼԻՍ :

ԿԻՍԱՄՍԵԱՅ “ՄԱՍԻՍ”Ի 1899 Ի ՏԱՐԵՇՐԶԱՆԸ, 608 կրկնաօր-
նակ էջերէ բաղկացած, հօսն բովանդակութեամբ, իրր ամբողջական հատոր մը
թղթակազմ հրապարակ եղած է եւ կը ծախուի ամէն գրաւաճառի քով, Կեդրո-
նաւելին է Յ. ՄԱՏԹԵՍԻԱՆ Տպարան, Գինն է 40 զրշ. : Գաւառներէ ուղղո-
ղները պէտք է 5 զրշ. աւելի վճարեն իրր թղթատարի ծախք :